

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Լիլիթ Մանվելի Պետրոսյանի «Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Լիլիթ Պետրոսյանի ատենախոսությունը նվիրված է ՀՀ-ում հակակոռուպցիոն մեխանիզմների հետազոտությանը և դրանց արդյունքների ֆինանսական գնահատման հիմնախնդիրների բացահայտմանը: Հեղինակի պնդմամբ՝ կոռուպցիան հասարակության մեջ ունի ընկալման տարբեր մակարդակներ, սակայն, ընդհանուր առմամբ այն բնորոշվում է որպես հասարակական, սոցիալական, ֆինանսական, տնտեսական բացասական երևույթ, և այդ իմաստով կարևոր է դրա դեմ պայքարը և դրա արդյունքների գնահատումը: Հեղինակը նշում է, որ ՀՀ-ում կոռուպցիայի նվազեցման գործում հրատապ խնդիրներից են տնտեսական և ենթակառուցվածքային բարեփոխումները, հատկապես կոռուպցիայի խորացման պատճառների բացահայտումն և հակակոռուպցիոն հետևողական քաղաքականության իրականացումը՝ սոցիալ-տնտեսական ծանր հետևանքների նվազեցման համար:

Բնականաբար ՀՀ-ում ներկայումս բազմակողմանի պայքար է ընթանում կոռուպցիայի և դրա հետևանքների դեմ, որը գտնվում է ինչպես պետության, այնպես էլ՝ տարբեր ոչ պետական հաստատությունների և հանրության ուշադրության կենտրոնում: Երևույթը աչքի է ընկնում բազմաթիվ բացահայտ և անհայտ հիմնախնդիրներով, որոնք ունեն առանձնահատկություններ գնահատման և հետազոտման բարդություններ և այլն:

Նշված հիմնախնդիրների հետազոտմանն է ուղղված Լիլիթ Պետրոսյանի ատենախոսությունը, որտեղ հեղինակը նպատակ է դրել բացահայտել հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման հեղինակային մոտեցումները և դրանց տեղայնացման հնարավորությունները, ուսումնասիրել հակակոռուպցիոն քաղաքականության պետական կարգավորման մեխանիզմները, բացահայտել պետական կառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերի առաջացման հնարավոր դեպքերը, առանձնացնել և համակարգել դեղերի շուկայում կոռուպցիոն ռիսկերի առաջացման մեխանիզմները, ինչպես նաև՝ մշակել հակակոռուպցիոն մեխանիզմներ պետությանը հասցված ֆինանսական և տնտեսական վնասների չափը նվազեցնելու համար: Այդ

հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ է հեղինակը հիմնավորել հետազոտության արդիականությունը և հրատապությունը ՀՀ տնտեսության համար:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Հեղինակի կողմից, որպես հետազոտության հիմնական նպատակ է դրվել բացահայտել հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման հիմնախնդիրները:

Հիմնական նպատակին հասնելու համար հեղինակը առաջ է քաշել հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել հակակոռուպցիոն մեխանիզմների էությունը, և դրանց վրա ազդող գործոնները,
- վերլուծել հակակոռուպցիոն մեխանիզմների պետական կարգավորման մեխանիզմները,
- բացահայտել պետական կառավարման համակարգում (գործադիր մարմին) կոռուպցիոն ռիսկերի առաջացման հնարավոր դեպքերը,
- առանձնացնել և համակարգել դեղերի շուկայում կոռուպցիոն ռիսկերի առաջացման մեխանիզմները, ինչպես նաև՝ մշակել հակակոռուպցիոն մեխանիզմներ պետությանը հասցված ֆինանսական և տնտեսական վնասների չափը նվազեցնելու համար:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 130 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսաամբողջական և տեղեկատվական հիմքերը, հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորոգյը, ինչպես նաև ստացված արդյունքների գործնական նշանակությունը, օգտագործումը և փորձարկումը:

Ատենախոսության առաջին՝ «Հակակոռուպցիոն մեխանիզմների առաջացման նախադրյալները և դրանց տեսամեթոդաբանական գնահատման մոտեցումները» գլխում հեղինակի կողմից ներկայացվել են կոռուպցիայի տեսությունները, տարբեր աղբյուրների ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է դասակարգման մոտեցումներն ու հակակոռուպցիոն մեխանիզմների տնտեսական դրդապատճառները արտերկրում, մասնավորապես՝ տեսական շարադրանքի ձևով նկարագրվել են արտերկրում իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության ուղղություններն ու ըստ միջազգային իրավական փաստաթղթերի կոռուպցիայի դեմ պայքարում սահմանված համապատասխան գործառույթները: Տվյալ գլխում, մասնագիտական գրականության ուսումնասիրության հիման վրա, ներկայացվել են նաև կոռուպցիայի չափման և կոռուպցիայի լավ կառավարման մակարդակներն արտացոլող համաթվերը:

Այս գլխում հեղինակը փորձել է լուծել ատենախոսությունում ներկայացված առաջին և երկրորդ խնդիրները, և գիտական նորույթ չի ձևավորվել և չի հիմնավորվել:

Ատենախոսության երկրորդ՝ «Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման ուղղությունները ՀՀ-ում» գլխում, հեղինակը իր կողմից ընտրված դեղորայքային բիզնեսում կոռուպցիոն մեխանիզմները ներկայացնելիս փորձել է տալ կոռուպցիայի դեմ պայքարի որակական գնահատման մեխանիզմ, որի նպատակն է բացահայտել, դրանց առաջացման ռիսկերը և ներկայացրել է վերջիններիս նվազեցման գործնական քայլեր: ՀՀ 400 դեղագործական ընկերությունների շրջանակում իր կողմից կազմակերպված հարցման արդյունքում ստացված տվյալներով խմբավորումներ է կատարել՝ մեծամասնության և փոքրամասնության սկզբունքի հիման վրա:

Այնուհետև, հեղինակը կենտրոնացել է պետական կառավարման համակարգում պաշտոնատար անձանց վարքագծի հետազոտության վրա՝ փորձելով նկարագրել վերջիններիս կոռուպցիոն ռիսկերը:

Ատենախոսության այս գլուխը փաստորեն նվիրել է իր դրված երրորդ և չորրորդ խնդիրների լուծմանը և փորձել է հիմնավորել որպես գիտական նորույթ ներկայացված առաջին և երկրորդ կետերը:

Ատենախոսության երրորդ՝ «Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական ռազմավարության մշակման գերակայություններն և դրանց կիրառման անհրաժեշտությունը ՀՀ-ում» գլխում հեղինակի կողմից ներկայացվել են մոտեցումներ ուղղված հակակոռուպցիոն ռազմավարության տարբեր գործոնների գնահատմանը:

Ատենախոսությունը ամփոփվել է դարձյալ ՀՀ դեղագործության շուկայում իրականացվող միջոցառումների արդյունքում համակարգելով կոոռլացիայի հավանական դեպքերի նվազեցմանն ուղղված միջոցառումների ներկայացմամբ և առաջ է քաշվել հիպոթեզ, համաձայն որի, հակակոոռլացիոն քաղաքականության կիրառումը դեղորայքի ոլորտում բերում է առավել մեծ արդյունավետության՝ կոոռլացիոն ռիսկերի հակվածությունը նվազեցնելու համար հակակոոռլացիոն կրթության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացմամբ: Հիպոթեզը փորձել է ապացուցել իր իսկ կողմից կատարված վերը նկարագրված հարցման արդյունքներով:

Այս գլխում շարունակելով լուծել երկրորդ և չորրորդ խնդիրները փորձում է հիմնավորել որպես գիտական նորույթ ներկայացված երկրորդ և երրորդ կետերը:

«Եզրակացություն» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրակացությունները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Որպես հետազոտության **ուսումնասիրության օբյեկտ** հեղինակի կողմից ընտրված է ՀՀ կոոռլացիոն համակարգերի ուսումնասիրությունը: Հետազոտության **առարկան** հակակոոռլացիոն մեխանիզմների ֆինանսական գնահատումն է՝ սոցիալ-տնտեսական բացասական հետևանքները վերացնելու համար:

Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել կոոռլացիայի ուսումնասիրության և գնահատման մեթոդաբանության վերաբերյալ աշխատությունները, ՀՀ օրենսդրությունն ու կառավարության որդեգրած հակակոոռլացիոն քաղաքականության ծրագրի մոտեցումները:

Հետազոտությանն տեղեկատվական հիմքերն են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, ՀՀ Կոոռլացիայի կանխարգելման հանձնաժողովի, ՀՀ ֆինանսների նախարարության, ԿԿ կենտրոնական բանկի պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, Համաշխարհային բանկի, Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոոռլացիոն կենտրոնի, ՏՀԶԿ-ի կողմից հրապարակած զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական, էմպիրիկ, տնտեսաչափական վերլուծության, հարցումների մեթոդներ և գործիքներ:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության գիտական արդյունքները հեղինակը ներկայացնում է հետևյալ երեք կետերով.

1. Բազմագործոն ռեգրեսիոն Էկոնոմետրիկ մոդելի կիրառմամբ գնահատվել է պետական կառավարման համակարգում պաշտոնատար անձանց եկամուտների վրա ազդող կոռուպցիոն ռիսկերի չափը՝ առանձնացնելով կոռուպցիոն ռիսկի առաջացման դրդապատճառները հակակոռուպցիոն նպատակադրված քաղաքականության իրականացման համատեքստում:
2. Մշտադիտարկման արդյունքների հիման վրա բացահայտվել են ՀՀ-ում դեղագործության շուկայի մասնակիցների վարքագիծը՝ ուղղված կոռուպցիոն գործարքների իրականացմանը, ինչպես նաև մշակվել են հակակոռուպցիոն մեխանիզմի ֆինանսական գնահատման ռազմավարական քայլերը:
3. Հակակոռուպցիոն ռիսկերի ֆինանսական գնահատման արդյունքում բացահայտվել են ՀՀ-ում կոռուպցիայի, անվանական ՀՆԱ-ի, ժողովրդավարության, միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշների միջև գոյություն ունեցող կապը, ինչպես նաև մշակվել է կոռուպցիայի նվազեցման ձևաչափ՝ ուղղված ՀՀ-ում տնտեսական բարեկեցության բարձրացմանը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը, դրական արժանիքների հետ մեկտեղ, զերծ չէ նաև թերություններից, որոնցից կարևորվում են մասնավորապես հետևյալները՝

1. Հակակոռուպցիոն մեխանիզմների մասին խոսելիս անդրադարձ չի կատարվել ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության շրջանակներում գործող կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքների կազմակերպմանն ու հաշվետվություններին, հատկապես դրա աշխատանքի արդյունքների ֆինանսական գնահատմանը:

2. Հակակոռուպցիոն պայքարը ունի տարբեր դրսևորումներ, ինչպիսիք են՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական, իրավական, որոնց ճիշտ կառավարումն ու կոորդինացումն էլ ապահովում են մեխանիզմների արդյունավետ գործողությունները: Ատենախոսությունում ֆինանսական գնահատման տեսակետից հարկ էր ներառել վերոնշյալ ուղղություններով արդյունավետության գնահատման մոտեցումներ՝ թե քանակական, թե որակական: Որակականը կարող էր կատարվել, օրինակ, շահառուների

շրջանակում ռեյտինգների և հասարակական կարծիքի փոփոխության, դրամական հոսքերի թափանցիկության աստիճանի ավելացման գնահատմամբ, իսկ ֆինանսականը՝ օրինակ, հակակոռուպցիոն ծախսերի, ներդրումների և դրա հատույցի, բյուջեի հավելյալ մուտքերի, այլընտրանքային ծախսերի կրճատման ցուցանիշների օգնությամբ:

3. Ատենախոսության մեջ դիտարկվել են մի կողմից պետական մարմինների ղեկավարների եկամուտները և մյուս կողմից՝ դեղագործության ոլորտը: Այդ երկու ոլորտները դիտարկվել են առանձին-առանձին, սակայն մեր կարծիքով այդ երկու տարբեր ոլորտների ընտրությունը և ֆինանսական մեխանիզմների գնահատման արդյունքների առնչությունը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Դա կարող էր գիտական արժեք ունենալ, եթե հեղինակի կողմից վերլուծության արդյունքում բացահայտվեին որոշ օրինաչափություններ:

4. Առհասարակ խոսելով «Մեխանիզմի ֆինանսական գնահատման» մասին, պետք է նշել, որ ատենախոսության մեջ բավարար խորությամբ չի հաջողվել կատարել, որը սակայն ենթադրվում է, թե թեմայի անվանումից, և թե ատենախոսության մասնագիտական ուղղվածությունից: Ի դեպ խնդիրները սահմանելիս նույնպես դա հաշվի չի առնվել:

- Ատենախոսության գիտական նորոպի երրորդ կետի վերաբերյալ ատենախոսը նշում է, որ կատարվել է ռիսկերի ֆինանսական գնահատում: Նախ չի հասկացվում, թե ինչն է ատենախոսը անվանում ակնկալվող կոռուպցիոն ռիսկերի դրամական կամ ֆինանսական գնահատում, հետևաբար այս մոտեցումը լրացուցիչ բացահայտման և հիմնավորման կարիք ունի:

- Բացի դրանից հստակ չէ, թե կոռուպցիոն դրսևորումների չափերի ազդեցությունը տնտեսության, կա՛մ բնակչության տարբեր խավերի եկամուտների, կա՛մ ֆինանսական վիճակի վրա ինչպես է հաշվարկվում, ինչպես է ատենախոսությունում ընտրված փոփոխականներով հաշվարկված մոդելը բնութագրում հենց ռիսկերի ֆինանսական կողմը:

- Նույնը կարելի է ասել նաև անցկացված հարցման ամփոփման մասին, որտեղ ատենախոսը սահմանափակվել է ըստ պատասխանների տեսակարար կշռի ներկայացումներով, և, ըստ էության, ֆինանսական գնահատման փորձ չի իրականացրել:

- Ատենախոսության 92-93-ում էջերում կամ սեղմագրի 16-17-րդ էջերում հեղինակի կողմից բերվել է դեղագործության ոլորտում կոռուպցիայի նվազեցմանն ուղղված միջոցառումների մեխանիզմ, սակայն այստեղ ատենախոսը սահմանափակվել է միայն հարաբերական ցուցանիշների վերլուծությամբ, բաց թողնելով ֆինանսական գնահատականը, օրինակ՝ կոռուպցիոն ռիսկերի առաջացման պայմաններում տնտեսական վնասի չափը:

5. Ատենախոսության գիտական նորույթի երկրորդ կետը հիմնավորելիս ատենախոսը առաջ է քաշել ներկրվող դեղերը ֆոնդային բորսայում ցուցակելու մեխանիզմ, որը սակայն, մեր կարծիքով, լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, հատկապես այն առումով, որ ֆոնդային բորսայում ցուցակվում են կազմակերպությունները իրենց արժեթղթերով: Եթե նույնիսկ խոսքը գնա դեղերի շուկայի մասնակիցների մասին, ապա ևս կա լրացուցիչ հիմնավորման կարիք, մասնավորապես, անհատ ձեռնարկատերեր (ԱՁ) հանդիսացող մասնակիցների գծով:

6. Ատենախոսության հեղինակը իր հիմնական վերլուծությունները իրականացրել է «Թրանսփերենսի Ինթերնեյշնլ»-ի կոռուպցիայի ընկալման, հանրային բարեվարքության համաթվերը, «Ֆրիդոմ Հաուս» հետազոտական ծրագիրը և նման կազմակերպությունների տվյալներով: Իհարկե դրանք լայն ճանաչում ունեցող կազմակերպություններ են, սակայն գիտական հետազոտությունը կշահեր, եթե ատենախոսը հաշվի առներ նաև համաշխարհային բանկի, արժույթի միջազգային հիմնադրամի համաթվերը, ինչպես նաև ակադեմիական ոլորտի աշխատությունները: Ամեն դեպքում, կոռուպցիան գաղտնի երևույթ է և դրա վերաբերյալ բացահայտված և չբացահայտված ցուցանիշները միշտ էլ կարող են կասկածի տեղիք տալ:

7. Հանդիպում ենք նաև ձևավորման թերությունների՝

- Ատենախոսության օբյեկտը սխալ է ձևակերպված, քանի որ չի կարող համակարգի ուսումնասիրությունը հանդիսանալ հետազոտության օբյեկտ:

- Ատենախոսության օգտագործված գրականության ցանկում, հատկապես 1-5 կետերում ելակետային տվյալները թերություններով են ներկայացված, իսկ 15-րդ աղբյուրում տարեթիվը նշված չէ: Բացի այդ տասը և ավելի տարվա գրականություն է օգտագործված, որը կարող է իր ազդեցությունը թողնել ուսումնասիրության խնդիրների արդիականության կամ համաշխարհային տնտեսական մտքի հետազոտության խորության վրա: Թիվ 9 հղումում աղբյուրը նշված է 1651 թ.

- Կառուցվածքային առումով անհամամասնորեն են քաշիված ատենախոսության գլուխները, մասնավորապես, ատենախոսության առաջին գլուխը ավելի ծավալուն է ներկայացված (50 էջ), քան ատենախոսության երկրորդ և երրորդ գլուխները միասին (38 էջ):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողություններով, որոնցից մի քանիսը լուրջ քննարկման կարիք ունեն պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ատենախոսության դրական արժանիքներով հանդերձ՝ Լիլիթ Մանվելի Պետրոսյանի «Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական

գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել, որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ փորձ է կատարվել լուծել ՀՀ հակակոռուպցիոն մեխանիզմների գնահատման վերաբերյալ խնդիրներ, հարցման, վերլուծության և հետազոտության արդյունքում տրված են որոշ հեղինակային նորովի լուծումներ:


Հետազոտության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում, ինչպես նաև հակակոռուպցիոն հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակած են ՀՀ-ում և արտերկրում թվով 6 (վեց) գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատակարման պահին ընդունելի հանդեսներում ու ժողովածուում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հիմնականում համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Եզրակացնելով նշենք, որ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 3-րդ կետի՝ գիտական աստիճան շնորհում է մասնագիտական խորհուրդը՝ հիմք ընդունելով ատենախոսության պաշտպանությունը, իսկ մեր կարծիքով, **Լիլիթ Մանվելի Պետրոսյանի «Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը** ներկայացված է ՀՀ ԲՈԿ-ի «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին համապատասխան, իսկ հաջող պաշտպանության դեպքում հեղինակին կարող է շնորհվել տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր

 **Ա. Ա. Հակոբյան**
03 հունիսի 2022թ.

Ա.Ա.Հակոբյանի ստորագրության
իսկությունը հաստատում են
ՀՊՏՀ-ի գիտական քարտուղար

 **Ա. Հ. Դարբինյան**
03 հունիսի 2022թ.

